Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԲԱԳՐԱՏ ԲԱԴԱԼՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Բագրատ Բադալյան:

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ:

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Բելգիայի Թագավորություն,

ք. Բրյուսել, 2019թ. մայիսի 13-15-ը:

4. Հրավիրող կողմը.

Արևելյան գործընկերություն (EaP):

5. Գործուղման նպատակը.

Մասնակցություն Արևելյան Գործընկերության 10-ամյակին նվիրված բարձր մակարդակի համաժողովին:

6. Քննարկված թեմաները.

Արևելյան Գործընկերության 10-ամյակին նվիրված բարձր մակարդակի համաժողովն անցկացվել է երկու պանելային քննարկումների միջոցով: Առաջին պանելի թեման էր <<EaP10. ձեռքբերումները և մարտահրավերները՝ քաղաքացիներին որոշակի արդյունքներ ներկայացնելու հարցում>>, իսկ երկրորդ պանելի խորագիրն էր <<Նայելով առաջ. Արևելյան Գործընկերության ապագան՝ դեպի ավելի ամուր տնտեսություններ, կառավարում, կապակցվածություն և հասարակություններ>>: Նշյալ պանելներին բացման խոսքով հանդես եկան համապատասխանաբար Եվրոպական Հանձնաժողովի Նախագահ Ժան-Կլոդ Յունկերը,

Ռումինիայի Արտաքին գործերի նախարար Տեոդոր Մելեշկանուն և Եվրոպական Հանձնաժողովի Փոխնախագահ/Արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով Բարձրաստիճան ներկայացուցիչ Ֆեդերիկա Մողերինին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Առաջին պանելը հագեցած էր ելույթներով մի շարք երկրների կառավարությունների ներկայացուցիչների կողմից, այդ թվում՝ Ուկրաինայի Նախագահ Պետրո Պորոշենկոն, Ադրբեջանի Արտաքին գործերի նախարար Էլմար Մամեդյարովը, Բելառուսի Արտաքին գործերի նախարար Վլադիմիր Մակեյը, Լեհաստանի Արտաքին գործերի նախարար Յացեկ Չապուտովիչը, Շվեդիայի Արտաքին գործերի նախարար Մարգո Վալշտղոմը, և Քրոսփրինգ ընկերության հիմնադիր Մորիս Բեքանդ Վերվին:

Երկրորդ պանելի ժամանակ ելույթներով հանդես են եկել Վրաստանի Վարչապետ Մամուկա Բախտաձեն, Մոլդովայի Վարչապետ Պավել Ֆիլիպը, Հայաստանի Արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանը, Առևտրի գծով Եվրոպական հանձնակատար Սեսիլիա Մալմստղոմը, Լիտվայի Արտաքին գործերի նախարար Լինաս Լինկևիչիուսը, Ուկրաինայի Քաղաքացիական հանրության ազգային հարթակի համաժողովի ներկայացուցիչ Հենադիյ Մակսակը:

Եզրափակիչ խոսքերով ներկայացան Ֆինլանդիայի Արտաքին գործերի նախարար Տիմո Սոինին ու Հարևանության և Ընդարձակման Բանակցությունների գծով Եվրոպական հանձնակատար Յոհանես Հահնը:

Այցի շրջանակներում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Բ. Բադալյանը եվրոպական կողմի հետ քննարկել է հարցեր՝ կապված Հայաստանի Հանրապետությունում Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի և Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման մայրուղու վերականգնման ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների հետ, որոնք ընդգրկված են Եվրամիության Արևելյան գործընկերության առաջնային նախագծերի ցանկում և ուղղված են արևելյան տարածաշրջանի տրանսպորտային ցանցերը Եվրամիության տրանսպորտային ցանցերի հետ կապելուն:

Քննարկվել է նաև Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 4 Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ֆինանսավորման տարբերակները և այդ գործում եվրոպական ֆինանսական կառույցների մասնակցության հնարավորությունները:

Առանձին անդրադարձ է եղել Հայաստանում ճանապարհային անվտանգության խնդիրներին ու մարտահրավերներին, ինչպես նաև դրա բարելավման նպատակով ԵՄ ֆինանսական կառույցների կողմից աջակցությունը:

8. Ստորագրությունը, ամսաթիվը.

Բագրատ Բադալյան

17.05.2019թ.